ՀՏԴ : 730(479.25)
DOI: 10.54503/2579-2830-2022.1(7)-189

ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅ ԱՐՁԱՆԱԳՈՐԾՆԵՐԸ. ԵՐԵՔ ՈՒՐՎԱՊԱՏԿԵՐ

ԱՐԹՈՒՐ ԱՎԱԳՅԱՆ*

Հղման համար. Ավագյան, Արթուր: «Մոսկվայի հայ արձանագործները. երեք ուրվապատկեր»: *Արվեստագիտական հանդես,* N 1 (2022): 189-199. DOI: 10.54503/2579-2830-2022.1(7)-189

XX դարի բազմաթիվ հայ արվեստագետներ հանգամանքների բերումով հիմնավորվեցին ոչ թե Հայաստանում, այլ օտար երկրներում՝ հնարավորություն ստանալով լիարժեք դրսևորելու իրենց տաղանդը, գտնելու լսարան, հասնելու հաջողության: Այդպես դասավորվեց նաև անվանի քանդակագործներ Նիկողայոս Նիկողոսյանի (1918-2018), Ֆրիդրիխ Սողոյանի (1936-2019) և Գեորգի Ֆրանգուլյանի (ծնվ. 1945) ստեղծագործական կենսագրությունը, որոնց համար երկրորդ հայրենիք դարձավ Ռուսաստանի մայրաքաղաք Մոսկվան: Անցնելով իրենց անկրկնելի ուղին արվեստում՝ նրանք շոշափելիորեն նպաստեցին թե՛ XX դարի երկրորդ կեսի և XXI դարասկզբի արձանագործության և թե՛ հայ-ռուսական մշակութային կապերի զարգացմանը:

Բանալի բառեր՝ հայ արձանագործներ, հայ կերպարվեստի պատմություն, հայ-ռուսական գեղարվեստական կապեր, Նիկողայոս Նիկողոսյան, Ֆրիդրիխ Սողոյան, Գեորգի Ֆրանգուլյան:

Ներածություն

XX դարի բազմաթիվ հայ արվեստագետներ հանգամանքների բերումով հիմնավորվեցին ոչ թե Հայաստանում, այլ օտար երկրներում՝ հնարավորություն ստանալով լիարժեք դրսևորելու իրենց տաղանդը, գտնելու լսարան, հասնելու հաջողության: Այդպես դասավորվեց նաև անվանի քանդակագործներ Նիկողայոս Նիկողոսյանի, Ֆրիդրիխ Սողոյանի և Գեորգի Ֆրանգուլյանի ստեղծագործական կենսագրությունը, որոնց համար երկրորդ հայրենիք դարձավ Մոսկվան: Անցնելով իրենց անկրկնելի ուղին արվեստում՝ նրանք շոշափելիորեն նպաստեցին թե՛ XX դարի երկրորդ կեսի և XXI դարասկզբի արձանագործության և թե՛ հայ-ռուսական մշակութային կապերի զարգացմանը:

Նիկողայոս Նիկողոսյան

ԽՍՀՄ ժողովրդական նկարիչ, ՌԴ գեղարվեստի ակադեմիայի իսկական անդամ Նիկողայոս Բագրատի Նիկողոսյանը (1918-2018) երկար ու բովանդակալից կյանք է ապրել: Նրա գեղարվեստական ժառանգությունը ներառում է մոնումենտալ քանդակ (արձաններ, ճարտարապետության դեկորատիվ հարդարանք, մահարձաններ և հուշաքարեր), հաստոցային ու մանր պլաստիկա, գեղանկարչություն, գրաֆիկա: Վարպետն արժանացել է մի շարք մրցանակների և պարգևների, այդ թվում՝ ԽՍՀՄ պետական մրցանակի (1977): Նրա աշխատանքները պահվում են Հայաստանի ազգային պատկերասրահում, Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում, Պետական Տրետյակովյան

* ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու, avart@rambler.ru, հոդվածը ներկայացնելու օրը՝ 10.09.2021, գրախոսելու օրը՝ 15.09.2021, տպագրության ընդունելու օրը՝ 20.05.2022:

պատկերասրահում, Պետական ռուսական թանգարանում, Հայաստանի, Ռուսաստանի, արտերկրի այլ հավաքածուներում:

Նիկողոսյանը ծնվել է Մեծ Շահրիար գյուղում (ներկայումս՝ գ. Նալբանդյան, ՀՀ Արմավիրի մարզ), իսկ դեռահաս տարիքում տեղափոխվել Երևան: 1944-1947 թթ. սովորել է Մոսկվայի Վ. Սուրիկովի անվան պետական գեղարվեստական ինստիտուտի քանդակագործության ֆակուլտետում՝ նշանավոր արձանագործ Ա. Մատվեևի արվեստանոցում: Նույն տարիներին սկսել է մասնակցել ցուցահանդեսների, ընդունվել ԽՍՀՄ նկարիչների միություն:

Նիկողոսյանի արվեստի հիմնական ժանրերից մեկը դիմաքանդակն է: Նման ընտրությունը միանգամայն օրգանական էր վարպետի համար, որը հակված էր տեսողական, ծավալային ձևի մշտական որոնմանը՝ անձնային-անհատական բնութագրեր արտահայտելու ճանապարհին: Նիկողոսյանի դիմաքանդակները հավաստի են ու համոզիչ արտաքին նմանության տեսանկյունից, բայց որ ավելի կարևոր է՝ բացահայտում են բնորդների ներքին՝ հուզական, հոգևոր աշխարհը: Պատահական չէ, որ նրանց շարքում գերիշխում են գիտության ու մշակույթի գործիչները, մտավոր ու ստեղծարար աշխատանքի տեր մարդիկ, որոնք հետաքրքիր են արդեն իսկ իրենց անձնային կերտվածքով (Ա. Խաչատրյանի (1954), Ե. Սիմոնովի (1954), Ա. Իսահակյանի (1955), Ռ. Զարյանի (1962), Ի. Կիտայգորոդսկու (1966), Գ. Քեպինովի (1967), Ե. Ռյաբինկինայի (1970), Տ. Պետրոսյանի (1982), Դ. Շոստակովիչի (1983) և այլոց դիմապատկերները): Նիկողոսյանի գլխաքանդակներն ու կիսանդրիները հարուստ են հորինվածքային լուծումներով, ցուցադրում են նյութի փայլուն իմացություն և հմուտ կիրառում:

Դիտողականությունն ու սուր աչքը, անշուշտ, կարևոր են պորտրետիստի համար: Սակայն Նիկողոսյանի հասուն գործերում առկա է նաև հավելյալ իմաստ, լրացուցիչ բովանդակություն, որը նրա աշխատանքներին հաղորդում է տարողունակ գեղարվեստական այլաբերության որակ: Լիովին պահպանելով բնորդին «տեսնելու» ունակությունը, հավատարիմ մնալով նրա արտաքին ու ներքին նկարագրին՝ հեղինակն անցնում է դիմապատկերման նեղ սահմանները և դիտողին հրավիրում մի երկխոսության, որի առարկան շատ ավելի ընդգրկուն է, քան առանձին վերցրած մարդու ճակատագիրը: Այսպես՝ պարային տարերքի կատարյալ մարմնացում է թվում աշխարհահռչակ Մայա Պլիսեցկայայի կիսանդրին (1956), որի բանաստեղծական ուժը վեր է զուտ անձնական, անհատական բնութագրից:

Ինչ վերաբերում է Նիկողոսյանի կոթողային աշխատանքներին, ապա դեռ 1940-ականների վերջին – 1950-ականների սկզբին նա ներգրավվեց Մոսկվայի այսպես կոչված ստալինյան բարձրահարկ շենքերից մեկի ձևավորմանը: Խոսքն Ապստամբության (այժմ՝ Կուդրինյան) հրապարակում գտնվող բազմաբնակարան տան մասին է, որի համար Նիկողոսյանը կատարեց 12 նստած ֆիգուր և 8 բարձրաքանդակ: Գործն այնքան դուր եկավ շենքի ճարտարապետ Լ. Ռուդնևին, որ երբ նրան առաջարկվեց նման շինություն կառուցել Լեհաստանի մայրաքաղաքում, նա առանց տատանվելու դիմեց հայ վարպետին: Արդյունքը փայլուն էր. Նիկողոսյանը Վարշավայի գիտության և մշակույթի պալատի քանդակային

անսամբլի (1952-1955) համար ստացավ Լեհաստանի Ժողովրդական Հանրապետության մշակույթի նախարարության ոսկե մեդալ:

Ավելի ուշ Հայաստանում Նիկողոսյանն իրագործեց մի շարք մոնումենտալ աշխատանքներ, որոնք նրան բերեցին լայն ճանաչում՝ գրող-հրապարակախոս Մ. Նալբանդյանի (1965) և բանաստեղծ Ե. Չարենցի (1987) արձանները Երևանում, XX դարի հայ պոեզիայի պատրիարք Ա. Իսահակյանի քանդակապատկերը Գյումրիում (1975)[1], Հայրենական մեծ պատերազմում զոհված զինվորների մեմորիալը Նալբանդյանում (1978): Հուզական բովանդակությամբ, կերպարների կառուցվածքով և կատարման ոճով տարբեր այդ աշխատանքները ներդաշնակորեն ներգծվեցին շրջապատող տարածական, ճարտարապետական միջավայրին՝ դառնալով դրա կարևոր, անբաժան մի մասը:

Դեմքերի ու դեպքերի մասին հիշողությունը հարատև նյութի (ամենից հաճախ՝ մարմարի և գրանիտի) մեջ պահպանելու ցանկությունն ընկած է նաև Նիկողոսյանի մահարձանների և հուշաքարերի կերտման հիմքում: Դրանք արտաքուստ զուսպ են, լակոնիկ՝ թելադրված ժանրի բուն էությամբ: Գեղարվեստական ժլատ միջոցներով են լուծված պետական և քաղաքական գործիչ Ա. Խանջյանի (1957, Երևանի քաղաքային պանթեոն), ճարտարապետ Կ. Հալաբյանի (1962), բանաստեղծ և մանկագիր Ս. Մարշակի (1967), դերասաններ Ռ. Սիմոնովի (1968) և Ե. Ուրբանսկու (1972, բոլորը՝ Մոսկվայի Նովոդևիչյան գերեզմանոց) մահարձանները և համանման այլ ստեղծագործություններ: Դրանց հարում են Նիկողոսյանի հուշաքարերը, որոնցից կերպարի սրությամբ, հստակ և արտահայտիչ ուրվանկարով առանձնանում է թատերական ռեժիսոր, ռուս բեմի նորարար Վ. Մեյերխոլդի հուշատախտակը (1968) Մոսկվայում:

Քանդակագործությանը զուգահեռ՝ Նիկողոսյանը լրջորեն զբաղվել է երփնագրով ու գրաֆիկայով: Նրա մեծաթիվ ինքնանկարները (մատիտով, ածուխով, յուղաներկով) սովորաբար անաչառ են, զննող, զերծ բնորդին հաճոյանալու միտումից: Հակառակ դրան՝ մեղմ և քնարական են կանանց կերպարները, որոնք գովերգում են մարդու մերկ մարմնի բնական գեղեցկությունը: Նիկողոսյանին, ինչպես և իր կրտսեր «արհեստակիցներ» Սողոյանին ու Ֆրանգուլյանին իրավամբ կարելի է անվանել բազմակողմանի, համընդգրկուն արվեստագետ, որի համար այս կամ այն նյութին կամ տեխնիկային հիանալի տիրապետելը ոչ թե ինքնանպատակ է, այլ գեղարվեստական խնդիրների լուծմանը տանող ճանապարհ:

Ֆրիդրիխ Սողոյան

Ավելի քան 400 քանդակների՝ մանր պլաստիկայից մինչև կոթողային մեծ համալիրներ, հեղինակ է ՌԴ, Ուկրաինայի և Հայաստանի ժողովրդական նկարիչ, Լենինյան մրցանակի դափնեկիր Ֆրիդրիխ (Ֆրիդ) Մկրտչի Սողոյանը (1936-2019): Ծնունդով լենինականցի՝ նա 1961-ին ավարտել է Երևանի գեղար-

[1] Այս հուշարձանի և մի շարք դիմաքանդակների համար Նիկողոսյանին շնորհվեց ԽՍՀՄ պետական մրցանակ:

վեստական ինստիտուտի քանդակի ֆակուլտետը, իսկ 1970-ից, նշանավոր քանդակագործ Ե. Վուչետիչի հրավերով, հաստատվել Մոսկվայում: Սողոյանի մոնումենտալ աշխատանքները տեղադրված են աշխարհի տարբեր քաղաքներում ու երկրներում, նրա ստեղծագործությունները պահվում են Հայաստանի, Ուկրաինայի, Ռուսաստանի, Ուզբեկստանի, Գերմանիայի, Շվեյցարիայի, Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի թանգարաններում, պատկերասրահներում ու մասնավոր հավաքածուներում:

Սողոյանի արվեստն ընդգրկում է գաղափարագեղարվեստական խնդիրների լայն շրջանակ: Անձնվեր ծառայություն հայրենիքին, ռազմական և աշխատանքային սխրանք, մարդկանց միաբանման խորհուրդ՝ ահա այս և նման թեմաներն են հուզում վարպետի ստեղծագործական երևակայությունը: Դրանց կերպավորումն աչքի է ընկնում մասշտաբայնությամբ, ընդհանրացված ու պարզ ոճով, նյութն ամբողջապես ենթարկելու կարողությամբ:

Հասարակական հնչեղ թեմաներ առաջադրելու լավագույն հարթակը, իհարկե, մոնումենտալ ձևն է՝ առանձին կանգնած արձանի, պլաստիկական համալիրի, թե բարձրաքանդակի տեսքով: Սողոյանի արվեստն այս առումով բացառություն չէ: Նրա ամենահայտնի կերտվածքը տվյալ ասպարեզում «Դնեպրի ազատագրումը» բազմաֆիգուր հորինվածքն է (1971–1981)[2]՝ արված Կիևի «Երկրորդ համաշխարհային պատերազմում Ուկրաինայի պատմության ազգային թանգարան» հուշահամալիրի համար: Այս մեծածավալ նախագծում արտացոլվեց Սողոյանի՝ խոշոր ձևի հետ հարաբերվելու ողջ վարպետությունը՝ բարդ, բայց հստակ հորինվածք, ամբողջի պլաստիկական միասնություն՝ առանձին հատվածների էքսպրեսիվ լարվածությամբ, հուշարձանի դիտման կարևոր կետերի հմուտ շեշտադրում, ստեղծագործության հուզական բովանդակությունն արտահայտող շարժումների և ժեստերի ճիշտ ընտրություն: Դրամատիկ ուժով լի մոնումենտն ակամայից հիշեցնում է հանուն հաղթանակի գործած, գիտակցված ինքնազոհության պատմական ամենավեհ օրինակները: Ռազմահայրենասիրական թեմատիկան այն ոլորտն է, որը Սողոյանին թույլ է տալիս «տեղ հասցնել» ինչպես իր նկարչական խառնվածքին, այնպես էլ մոնումենտալ արվեստի ոգուն հարազատ գեղագիտական ուղերձը:

Սողոյանի կոթողային աշխատանքներում անմիջական անդրադարձ կա նաև մերօրյա պատմության դրվագներին, այդ թվում՝ Սպիտակի ավերիչ երկրաշարժին (1988), որի հետևանքով գրեթե ամբողջովին քանդվեց արվեստագետի ծննդավայրը, և նահատակվեցին տասնյակհազարավոր անմեղ մարդիկ: Տուժածներին ցուցաբերած օգնության համար հայ ժողովրդի և անձնապես հեղինակի երախտագիտությունն են խորհրդանշում, մասնավորաբար, Վաշինգտոնի կենտրոնում կանգնեցված «Մայր Երկիրը» («Հայաստան» (1991), համահեղինակ՝ Մ. Սողոյան), ԽՍՀՄ կառավարության նախագահ Ն. Ռիժկովի կիսանդրին Սպիտակում (1998) և հիշատակը հավերժացնող հուշատախտակը Գյումրիում (2002): Զոհվածների հիշատակը բարձր պահելու, նաև համախմբվելու և վրա-

[2] Այս աշխատանքի համար Սողոյանին շնորհվեց Լենինյան մրցանակ:

հաս փորձությունները հաղթահարելու յուրատեսակ կոչ է «Անմեղ զոհերին, բարեգութ սրտերին» հուշահամալիրը (2008) Գյումրիում, որը վարպետն իրականացրել է որդիների՝ Միքայելի և Վահեի հետ: Դրանից շուրջ տասը տարի առաջ նույն հեղինակային կոլեկտիվն ստեղծել էր ևս մեկ ծրագրային հուշարձան՝ «Խաչ միացյալ («Դարերում օրհնյալ է»)» (1997, Մոսկվա) գրանիտե քանդակախումբը, որը մարմնավորում է հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամության գաղափարը[3]:

Մարդկությանը գործուն ծառայելու, ֆիզիկական ու հոգևոր արարման իդեալներն առանցքային տեղ ունեն Սողոյանի արվեստում: Դրանցով են համակված կատարման ժամանակով և մտահղացմամբ այնպիսի տարբեր ստեղծագործություններ, ինչպիսիք են «Արարողը» (1969) Արթիկում, «Նեստոր տարեգիրը» Կիևում (1988), «Շինարար բանվորի արձանը» (2002, համահեղինակ՝ Վ. Սողոյան) Դոլգոպրուդնիում և այլն: Ներամբողջական, ոգով (և մարմնով) ուժեղ, կամային անձնավորություն՝ այսպիսին է Սողոյանի տղամարդկային արձանների հերոսը:

Մարդու էության այլ նիստ են բացահայտում նրա կանացի կերպարները («Կուժերով աղջիկ» (1960, Երևան), «Գուլպայագործ կնոջ արձանը» (1964, Գյումրի), «Ողբացող մայրեր» (1970-1972, Սամարղանդ), «Աստվածամայրը՝ Քրիստոսի դիմապատկերով» (1994, Մոսկվա), «1945-1953 թթ. քաղաքական բռնությունների զոհերին» (1996, Մոսկվա), «Մայրություն» (2008, համահեղինակ՝ Վ. Սողոյան, Մոսկվա), «Հյուսիսի զավակներին» (2008, Մուրավլենկո, Տյումենի շրջան)): Լինելով պարզ ու ներդաշնակ, զուսպ՝ հույզերի արտահայտման մեջ՝ նրանք նաև ներքուստ իմաստալի են, ոգեղեն: Կանանց պոետիկ հմայքը լավագույն վկայաբերումն է հայտնի բանաձևի, թե «գեղեցկությունը կփրկի աշխարհը»՝ ուրախ ու ձախորդ օրերին:

Սողոյանն ստեղծել է նաև բազմաթիվ դիմաքանդակներ, որոնք պատկերում են ամենատարբեր մասնագիտությունների տեր մարդկանց՝ գիտնականների, բժիշկների, զինվորականների, մարզիկների, բանվորների («Արթիկցի բանվորը» (1967), «Ծերունի (Ծեր կիևցի)» (1985), «Հ. Բաղրամյան» (1985), «Ամերիկացի սենատոր Ռ. Դոուլ» (1991), «ՄՊՀ ռեկտոր, ակադեմիկոս Վ. Սադովնիչի» (1996), «Ժողովրդական արտիստուհի Է. Բիստրիցկայա» (1999), «ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Ա. Ջիգարխանյան» (2006), «Տարեց հայուհի» (2007)), ավելի հազվադեպ՝ հարազատներին ու մտերիմներին: Մնացյալում վարպետի հաստոցային պլաստիկան կրկնում է նրա մոնումենտալ ստեղծագործության կերպարներն ու սյուժեները՝ համալրվելով դիցաբանական ու կենցաղային բնույթի ոչ ստվարաքանակ գործերով:

Գեորգի Ֆրանգուլյան

ՌԴ ժողովրդական նկարիչ, Ռուսաստանի գեղարվեստի ակադեմիայի իսկական անդամ Գեորգի Ֆրանգուլյանը ծնվել է 1945 թ. Թիֆլիսում, մանուկ հասակում տեղափոխվել Մոսկվա:

[3] 2013 թ. «Միացյալ խաչ» վերտառությամբ համանման հուշարձան բացվեց Երևանում:

Ն. Նիկողոսյան, Մայա Պլիսեցկայա, 1956, բրոնզ, 68x134x70, Նիկո պատկերասրահ, Մոսկվա

Ն. Նիկողոսյան, Գեղջկուհի, Կուդրինյան հրապարակի բարձրահարկ շենքի ճակատային քանդակ, 1952-1954, կրաքար, Մոսկվա, լուսանկարը՝ Հ. Ավագյանի

Ն. Նիկողոսյան, Բանաստեղծ Եղիշե Չարենցի հուշարձանը, 1985, բրոնզ, բարձրությունը՝ 1850 սմ, Երևան, դրվագ

Ն. Նիկողոսյան, ՌԽՖՍՀ ժողովրդական արտիստ Վսեվոլոդ Մեյերխոլդի հուշատախտակը, 1968, բրոնզ, Մոսկվա, լուսանկարը՝ Հ. Ավագյանի

Ֆ. Սողոյան, Մ. Սողոյան, Վ. Սողոյան, Անմեղ զոհերին, բարեգութ սրտերին, 2008, բրոնզ, բարձրությունը՝ 900 սմ, 1988 թ. Սպիտակի երկրաշարժի 20-ամյակին նվիրված հուշահամալիր, Գյումրի, դրվագ

Ֆ. Սողոյան, Հայրս, 1975, բրոնզ, 42x30x27, Պետական Տրետյակովյան պատկերասրահ, Մոսկվա

Ֆ. Սողոյան, Դնեպրի ազատագրումը, «Երկրորդ համաշխարհային պատերազմում Ուկրաինայի պատմության ազգային թանգարան» հուշահամալիր, 1971-1981, բրոնզ, Կիև

Ֆ. Սողոյան, Վ. Սողոյան, Խաչ միացյալ (Դարերում օրհնյալ է), 1997, գրանիտ, բարձրությունը՝ 320 սմ, Մոսկվա

Գ. Ֆրանգուլյան, Դանթեի նավակը, 2007, բրոնզ, բարձրությունը՝ 320 սմ, Վենետիկ

Գ. Ֆրանգուլյան, Իոսիֆ Բրոդսկու հուշարձանը, 2011, բրոնզ, բարձրությունը՝ 330 սմ, Մոսկվա

Գ. Ֆրանգուլյան, Միխայիլ Բուլգակովի հուշարձանը, 2018, բրոնզ, բարձրությունը՝ 400 սմ, Մոսկվա

Գ. Ֆրանգուլյան, Մեծ մարտակառք, 1980, շամոտ, բարձրությունը՝ 50 սմ, Պետական Տրետյակովյան պատկերասրահ, Մոսկվա

1960-ականներին սովորել է Ս. Ստրոգանովի անվան բարձրագույն գեղարվեստաարդյունաբերական ուսումնարանի քանդակի բաժանմունքում, մոտավորապես նույն ժամանակ սկսել է ցուցադրել իր գործերը:

Արտառոց ստեղծագործական էներգիա և հազվագյուտ աշխատասիրություն է դրսևորել Ֆրանգուլյանը զանազան ոլորտներում՝ մոնումենտալ և հաստոցային քանդակ, դեկորատիվ ու մանր պլաստիկա, գեղանկար, գրաֆիկա, նաև՝ ինտերիերների նախագծում, ցուցահամալիրների գեղարվեստական կազմակերպում, մոմանկարչության նորարարական տեխնիկայի մշակում:

Մեր օրերում Ֆրանգուլյանը Ռուսաստանի ամենահաջողակ ու պահանջված արձանագործներից է: Այս համբավը նա ձեռք է բերել նախ և առաջ շնորհիվ աշխարհի տարբեր երկրներում կանգնեցրած հուշարձանների: Նրա միջազգային ճանաչմանը նպաստած առաջին աշխատանքներից էր 1990-ի բրոնզաձույլ «Խաչելությունը» Ռավեննայի Ս. Ֆրանցիսկի մայր եկեղեցու համար: Դրան հաջորդեցին Պետրոս Առաջինի (1998, Անտվերպեն), Ա.Ս. Պուշկինի (1999, Բրյուսել), կայսրուհի Ելիզավետա Պետրովնայի (2004, Բալտիյսկ), Ի. Բաբելի (2011, Օդեսա), Բ. Ելցինի (2011, Եկատերինբուրգ), Ա. Էյնշտեյնի (2015, Երուսաղեմ), Բ. Օկուջավայի (2002), Ա. Խաչատրյանի (2006), Ի. Բրոդսկու (2011), Դ. Շոստակովիչի (2015), Մ. Բուլգակովի (2018), Ե. Պրիմակովի (2019), Կ. Հալաբյանի (2021, բոլորը՝ Մոսկվա) արձանները, «Դանթեի նավակը» (2007, Վենետիկ), «Սպիտակ քաղաք» (2014, Մոսկվա), «Վշտի պատ» (2017, Մոսկվա) քանդակային հորինվածքները: Ոճով և կերպարների գեղարվեստական մարմնավորման մեթոդով (ընդհուպ գրոտեսկի) միմյանցից խիստ տարբերվող այդ ստեղծագործություններում երևում են կառուցիկ ամուր հիմք, ձևի միասնական արխիտեկտոնիկա, նյութի և ճարտարապետական անսամբլի անվրեպ զգացողություն: Նաև դեկորատիվ ջիղ, ոչ միայն ծավալներ, այլև մակերեսներ գործառելու, ձևը գծի և գույնի հետ համադրելու ակնհայտ ձիրք: Բացօդյա միջավայրի պայմաններում Ֆրանգուլյանը կրկին ու կրկին լուծում է արձանագործության գլխավոր, հիմնարար պրոբլեմը, որին բազմիցս անդրադարձել է նաև իր ելույթներում՝ ծավալն ու տարածությունը համաձայնեցնելու, «հաշտեցնելու» խնդիրը: Ըստ որում, մտահղացման ռացիոնալիզմը հեշտորեն զուգորդվում է գեղարվեստական ձևի անկաշկանդ արտահայտչականության հետ, տրամաբանությունը՝ երևակայության, իրականությունը՝ պատրանքի՝ ծնելով բարդ, բազմաձայն ներդաշնակություն: Վարպետի էսթետիկական աշխարհընկալման այս տարիմաստ ու, միաժամանակ, օրգանական երկատվածությունն ի մի է բերում կեցության, թվում է, անհամադրելի բևեռներ:

Ֆրանգուլյանի հաստոցային գործերն ընդլայնում են նրա պոետիկայի, արտահայտչական լեզվի սահմանները, համալրում «մանր ձևի» բառապաշարով: Հենց այստեղ է իրացվում նրա ստեղծագործական մեթոդի այնպիսի կարևոր առանձնահատկություն, ինչպիսին վարիատիվությունն է, այս կամ այն թեման աշխատանքների շարքերի միջոցով հետազոտելու, գեղարվեստական հղացումը տարբերակներում բյուրեղացնելու միտումը: Եթե Ֆրանգուլյանի արձանները նվիրված են կոնկրետ մարդկանց՝ պոետներ, արվեստագետներ, քաղաքական

ու պետական գործիչներ, ապա նրա հաստոցային պլաստիկան, հարթաքանդակները, գրաֆիկան առավելապես անդրադառնում են մարդու մերկ մարմնի գեղագիտությանը, որը մեկնաբանված է ամբողջության (կանացի միաֆիգուր պատկերումներ) կամ հակադիր սկզբունքների գոյակցության (կենակցման տեսարաններ ներկայացնող զուգադիր «ակտեր») մեջ: Ֆրանգուլյանի հաստոցային հորինվածքները տարողունակ են, բազմիմաստ, դրանց մեջ պարզորոշ լսելի է քանդակի դասական, անտիկ ըմբռնման արձագանքը, որը «նշանավորում էր ավելի ու ավելի հաստատուն էսթետիկական հիմքի որոնում՝ կեղծ գեղարվեստական ամենաթողության, կիտչի սանձարձակման, պոստմոդեռնիզմի ավերիչ հեգնանքի, կոնցեպտուալիզմ կոչված ճարտար խաղի պայմաններում, որն իրականացվում էր արվեստի ավանդական տեսակների նախորդող փորձի հետ կապն իբր մերժող՝ տեսալսողական հաղորդակցման միջոցների օգնությամբ» [1]:

Ֆրանգուլյանի քանդակների ծավալատարածական և պլաստիկական հատկությունները կյանք են առնում իրենց բնական միջավայրում՝ լինի ժամանակակից քաղաքի ճարտարապետություն, թե ցուցասրահի ինտերիեր: Դա բացատրվում է հեղինակի սկզբունքային մոտեցմամբ. իրական չափերի, լուսավորության, հարևան օբյեկտների «ուժային դաշտերի» հաշվառումը նրա համար մասնագիտական կոմպետենտության հարց է:

Եզրակացություններ

Ինչպես տեսնում ենք, նշված քանդակագործներից յուրաքանչյուրն ունի իր ձեռագիրն արվեստում և հեշտ ճանաչելի է: Ֆրանգուլյանը հիմա էլ շարունակում է աշխատել, ուստիև լրացնել հայ-ռուսական գեղարվեստական կապերի պատմությունը, որի նախորդ էջերը գրել են իր ավագ գործընկերները:

Գրականության ցանկ

1. Рюмин Александр. Бремя красоты, Наше наследие, 2005, № 73, http://www.nasledie-rus.ru/podshivka/7321.php [Դիտված է 20.12.2021 թ.]:

References

1. Rjumin Aleksandr. Bremja krasoty, Nashe nasledie, 2005, № 73, http://www.nasledie-rus.ru/podshivka/7321.php [Ditvac' e' 20.12.2021 t'.].

АРМЯНСКИЕ СКУЛЬПТОРЫ МОСКВЫ: ТРИ ЗАРИСОВКИ

АРТУР АВАГЯН*

Для цитирования: Авагян, Артур. “Армянские скульпторы Москвы: три зарисовки”. *Искусствоведческий журнал,* N 1 (2022): 189-199. DOI: 10.54503/2579-2830-2022.1(7)-189

* Старший научный сотрудник отдела изобразительного искусства Института искусств НАН РА, кандидат искусствоведения, avart@rambler.ru, статья представлена 10.09.2021, рецензирована 15.09.2021, принята к публикации 20.05.2022.

XX век дал целую плеяду армянских художников, которые в силу обстоятельств обосновались не в самой Армении, а в других странах, где они получили возможность полноценно проявить свой талант, найти зрительскую аудиторию, добиться успеха. Именно так сложилась творческая биография известных скульпторов Николая Никогосяна (1918-2018), Фридриха Согояна (1936-2019) и Георгия Франгуляна (род. в 1945 г.), для которых второй родиной стала столица России Москва. Пройдя свой неповторимый путь в искусстве, они внесли значительный вклад в развитие искусства скульптуры второй половины XX – начала XXI века, равно как и армяно-русских художественных связей.

Ключевые слова: армянские скульпторы, история армянского изобразительного искусства, армяно-русские художественные связи, Николай Никогосян, Фридрих Согоян, Георгий Франгулян, армяно-русские художественные связи.

ARMENIAN SCULPTORS OF MOSCOW: THREE SKETCHES

ARTUR AVAGYAN*

For citation: Avagyan, Artur. "Armenian Sculptors of Moscow: Three Scetches", *Journal of Art Studies,* N 1 (2022): 189-199. DOI: 10.54503/2579-2830-2022.1(7)-189

The 20th century gave birth to many Armenian artists, who had to settle down not in Armenia, but in foreign lands, where they got the opportunity to fully show their talent, find an audience, and achieve success. This is how the creative biography of famous sculptors Nikolai Nikoghosyan (1918-2018), Friedrich Soghoyan (1936-2019) and Georgy Frangulyan (born 1945) developed: the capital of Russia Moscow became the second homeland for them. With their unique path in art, they made a significant contribution to the development of sculpture in the second half of the 20th and early 21st centuries, as well as to the Armenian-Russian art relations.

Key words: Armenian sculptors, history of Armenian fine arts, Armenian-Russian art relations, Nikolai Nikoghosyan, Friedrich Soghoyan, Georgy Frangulyan.

* Senior Researcher at the Department of Fine Arts of NAS RA Institute of Arts, Doctor of Arts, avart@rambler.ru. The article was submitted on 10.09.2021, reviewed on 15.09.2021, accepted for publication on 20.05.2022.